

ԻԲՆ-Ի ԲՈԼՏՈՒԹՅՈՒՆ

Քայլեց իվ բարգմանեց
Հ. Ա. Շ. Ա. Շ.

2(47.925)

(2-47)

Успенский З.

10441

Борисов
Бирнштейн

4а.

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

№ 2 ИЗВЕСТИЯ ИНОСТРАНЦЕВ ОБ АРМЯНАХ № 2
АРАБСКИЕ ИСТОЧНИКИ

ИБН-И БАТУТА

Перевод и комментарии
Р. АЧАРЯНА

ИЗДАТЕЛЬСТВО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН — 1940

9 (17-9-28)
12-47

ԽՍՀ ԿՐԵՍՏՈՒՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ, Ա. ՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 2 ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ № 2
ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՅԱԼԻԳՎԱՐ Հ. 1961 թ.

A ^{III}
32958
10444

Ի ԲՆ-Ի ԲԱՏՈՒՏԱ

Քաղեց և քարգմանեց
Հ. Ա.Հ.Ռ. 80.1



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, Ա. Ն. - 1940

ԿԵՆՍԱԳՐՈՒԿԱՆ ԳԾԵՐ

Աբու Աբդալլահ Մուհամեդ-ըին Աբգուլլահ-ըին Մուհամեդ-ըին իրբահիմ էլվաթի էտտանջի, անվանյալն իրն-ի Բատուտա կամ Շէմսէդդին արաբ ճանապարհորդը ծնվել է Tanger քաղաքում, 1304 թվին: 1325 թվին նա դուրս է հկել իր հայրենի քաղաքից՝ Մեքքա սրբազն քաղաքը ուխտի գնալու համար: Այս առթիվ այցելել է Մարոկը, Ալժիրը, Թունիսը, Տրիպոլին, Եգիպտոսը, Ասորիքը և Արարական ծոցը կամ Քարային Արաբիան: Այնուհետեւ անցել է Պարսկաստան, Իրակ, Միջագետք, Փոքր-Ասիա, Խփչազի երկիրը (հարավային Ռուսաստան), Պոլս, Բուխարա, Աֆղանստան, Հնդկաստան, Մալյիվյան կղզիները, Ճեյլոն, Հընդկական Արշականագոսը և Զինաստան: Այս ահազին ճամբորդությունից վերադառնալուց հետո, երկրորդ և երրորդ անգամ դուրս դալով աշխարհներ տեսնելու, այցելել է Գրանադայի թագավորությունը, Սուդան, Զանդիբար, մինչև Ափրիկեի կենտրոնը: Մեսել է 1378 թվին:

Իր ճամբորդությունը նա պատմում է մի ընդարձակ աշխատության մեջ, որ ինքը անձամբ թելադրել է իրն-ի Զուզի անուն քարտուղարին:

Իրն-ի Բատուտայի աշխատությունը քանիցս անգամ տպված է Եվրոպայում. լավագույն հրատարակությունը կատարեց Ասիական ընկերությունը, Պարիս 1853, Desfrémetey և Sanguinetti անուն արևելագիտների աշխատությամբ, արաբերեն ընագրով և ստորագիր Գրանսերեն թարգմանությամբ, չորս հատոր (2000 էջ): Անունների ցանկը հրատարակվեց 1922 թ. Պարիս:

Մենք գործածել ենք վերոհիշյալ հրատարակությունը:

و في الحديث الصحيح ان رسول الله صلعم وصل ليلة
الاسراء والمعراج سدرة المتسوى فاذا في اصلها اربعه انهار نهران
ظاهران و نهران باطنان فسأل عنها جبريل عليه السلام فقال
اما الباطنان ففي الجنة و اما الظاهران فالنيل و الفرات و
في الحديث ايضا ان النيل و الفرات و سيحان و جيحان
كل من انهار الجنة

و النيل احد انهار الدنيا الخمسة الكبار وهي النيل و
الفرات و الدجلة و سيحون و جيحون

ذكر بعض فضلاء القدس... و منهم الشيخ الصالح
العايد ابو عبد الرحيم عبد الرحمن بن مصطفى من اهل
ارزروم و هو من تلامذة تاج الدين الرفاعي

Ճշմարիտ ավանդության (հաղիսի) մեջ կարդամ ենք
թե Աստուծո Առաքյալը (Մահամեդ) (Աստուծո օրհնու-
թյունը իր վրա թող լինի) իր գիշերային ճամբորդության
միջոցին հասավ մինչև վերջին ծայրի (սահմանի) lotus-ը¹)
և նրա արմատին տեսավ չորս գետ. Երկու գետ ներքին և
երկու գետ արտաքին: Այս մասին հարցը Գաբրիելին
(հրեշտակապիտին) և նաև պատասխանեց. «Երկու ներքին-
ները հոսում են դրախտի մեջ, իսկ երկու արտաքինները
(որ հոսում են դրախտից դուրս) են Նեղոսը և Եփրատը»:
Եւ հաղիսի մեջ կա նաև որ Նեղոսը, Եփրատը, Սիհոնը և
Զիհանը, բոլորն էլ դրախտի գետերիցն են²):

Ա. Էջ 77—78

Նեղոսը աշխարհի հինգ մեծագույն գետերից մեկն է.
սրանք են՝ Նեղոսը, Եփրատը, Տիգրիսը, Սիհոնը և Զիհու-
նը:

Ա. Էջ 79

Հիշատակություն Երուսաղեմի մի քանի նշանավոր
մարդկանց... նրանցից է արդար և բարեպաշտ շեյխն Արու-
մարդառահիմ Արդառահման՝ որդի Մուստաֆայի, Արզրու-
մի բնակիչներից և նա էր Թաջէդդին էրբիֆայիի աշա-
կերտներից³):

Ա. Էջ 125—6

ثم سافرت الى حصن بغراس (و ضبط اسمه بباء
موحدة مضمومة و غين معجمة مسكونة و راء و
آخره سين مهملاً) و هو حصن منيع لا يرام عليه
البساتين و المزارع و منه يدخل الى بلاد سيس وهى
بلاد كفار الارمن و هم رعية للملك الناصر يؤدون اليه
مالاً و دراهمهم فضة خالصة تعرف بالبغليه و بها تصنع
الثياب الدينية

و امير هذا الحصن صارم الدين ابن الشيباني وله ولد
فاصل اسمه علاء الدين و ابن اخ اسمه حسام الدين
فاصل كريم يسكن الموضع المعروف بالرصص بضم
الراء و الصاد المهملاً الاول و يحفظ الطريق الى بلاد
الارمن حكايته شكي الارمن مرة الى الملك الناصر
بامير حسام الدين و زوروا عليه امور الاتيلق فنفذ امره
لامير الامر آ بحلب ان يختنه فلما توجه الامر بلغ ذلك
صديقاه من كبار الامراء فدخل على الملك الناصر و

Այսուհետեւ ձանապարհվեցի դեպի Բուղբաս (Pagræ) բերդը. (այս անունը կարգացվում է թ բաղաձայնով և հաջորդ ու ձայնավորով և դ բաղաձայնով՝ առանց ձայնավորի և բաղաձայնով): Բերդը ամուր և անառիկ է: Նրա մոտ կան պարտեղներ և արտեր: Այդ տեղից մտնում են Սովերկիրը, այն է քափիր հայերի երկիրը, Նրանք Մալիքալ-Նասիրին հպատակ են և նրան հարկ են տալիս: Նրանց դրամները մաքուր արծաթ են և կոչվում են բաղլիլյա): Նրանց մոտ շինվում են դաբիգիյա (այլ ԶԶ ՀՅԱՆ ՇՊԻԼՊԻԼՅԱ):

Այս դ գաբլիզ կոչված կտորները: Այս բերդի էմիրն է Մարիմ-էղ-դին, որդի Շիբանիր, ունի առաքինի մի որդի, որի անունն է Ալա-էղ-դին, և մի եղբորորդի, որի անունն է Հուսամ-էղ-դին, առաքինի և աղնիք. բնակվում է Թուսասում կոչված տեղը (չ ձայնը և առաջին ո բաղաձայնը ունին ու) և պահում է Հայաստանի ձանապարհը:

Պատմություն.—Մի անգամ հայերը գանգառվեցին Մալիք-էլ-Նասիրին՝ էմիր Հուսամ-էղ-դինի դեմ և զրպարաւեցին նրան՝ անվայել գործերի մեջ: Թագավորը հրաման տվեց՝ Հալեբի էմիրների էմիրին՝ խեղպամահ անել նրան: Եթե հրամանն արձակվեց, նրա բարեկամ մեծ էմիրներից մեկը իմացավ և մտնելով Մալիք-էլ-Նասիրի մոտ, առաց,

قال ياخوند ان الامير حسام الدين هو من خيار الامراء
ينصح للمسلمين و يحفظ الطريق و هو من الشجعان و
الارمن يريدون الفساد في بلاد المسلمين فيمنعهم و يقهر
هم و انما ارادوا اضعاف شوكة المسلمين بقتله و لم
يزل به حتى انفذ امرا ثانيا بسراحه و الخلع عليه و
رده لموضعه و دعا الملك الناصر بريديا يعرف بالاقوش
و كان لا يبعث الا في مهم و امره بالاسراع و الجد
في السير فسار من مصر الى حلب في خمس و هي مسيرة
شهر فوجد امير حلب قد احضر حسام الدين و اخرجه
إلى الموضع الذي يخنق به الناس فخلصه الله تعالى و
عاد إلى موضعه

5

و لم احضر تلك الليلة لا كنى رأيت بمدرسه الضياف ثلاثة
من الرجال احدهم من ارض الروم و الثاني من اصبهان
و الثالث من خراسان و هم مقعدون فاستخبرتهم عن

«Ո վ տեր, կմիք Հուսամ-էղ-դինը արդարն լավագույն
էսիբներից է. խրատում է մուսլիմաններին, պահպանում է
ճանապարհը և քաջ է. հայերն ուզում են մուսլիմանների
երկրին վասուել նա նրանց արգելում է և նվաճում. զրա
համար ուզում են նրան սպանել տալով մուսլիմանների
փառքը նսկմացնելու: Եւ չդադարեց մինչեւ ձեռք բերեց մի
երկրորդ հրաման՝ արձակելու նրան, խալաթով պատվելու և
իր պաշտոնատեղին վերադարձնելու: Մելիք-էլ-Նասիրը
կանչեց մի սուրհանողակ՝ էլակուշ անունով⁸). նրան ուզար-
կում էին միմիայն կարեվորագույն գեղեցրում: Հրամայեց
նրան արագացնել իր լնթացքը: Նա գնաց Կահիրեից մինչեւ
Հալաբ 5 օրից, որ մի ամսվա ճանապարհ է: Նա գտավ
Հալաբի էսիբին՝ որ արդեն կանչել էր Հուսամ-էղ-դինին
և դուրս էր բերել այնտեղ, ուր խեղզաման են անում
մարդկանց: Բարձրյալն Ասաված փրկեց նրան և վերադար-
ձով իր պաշտոնատեղին⁹):

Ա. էջ 163—5

5

[Պատմում է թե նաջափի Մաշադ-Ալի քաղաքում Ալիի
գերեզմանի վրա անդամալույժները բժշկվում են Ռաջար
ամսի 27-ի գիշերը: Դրա համար իրանի, Խորասանի, Պարս-
կաստանի և Ռումի (*الروم*) երկրից անդամալույժները հա-
փաքվում են այստեղ: Եւ ավելացնում է:]

Ես ներկա չեղա այդ գիշերը. բայց տեսա հյուրանո-
ցում երեք հոգի, որոնցից մեկը Արզրումից, երկրորդը
Սպահանից և երրորդը Խորասանից. նրանք անդամալույժները մասնաւում են այս գործությունները:

شانهم فاخبرونى انهم لم يدر كوا ليلة المحيانا و انهم
منتظرون او انها من عام آخر و هاده الليله

6

الامير سويته امير دياربكر

7

ذكر المغلبين على الملك بعد موت السلطان ابى سعيد
فمنهم الشيخ حسن ابن عمه الذى ذكرناه آنفاً تغلب
على عراق العرب جميعاً و منهم ابراهيم شاه ابن الامير
سنيته تغلب على الموصل و دياربكر

8

و كان قد بقى لاوان سفرالر كب ازيد من شهرین فظهرلى
أن أسافر الى الموصل و دياربكر لأشاهد تلك البلاد

9

و في العاشر وصلنا الى مدينة العلايا و هي اول بلاد

էինու Ես հարցրի իրանց վիճակի մասին և ինձ հայտնեցին
թե իրենք չեն հասել Կենաց գիշերին և թե սպասում են
դրա համար մյուս տարվա նույն օրվան:

Ա. Էջ 418

6

[Իրակի թագավոր Արու-Սայիդի մերձավորների մեջ
հիշում է]:

Էմիր Սուվայթա՞ն Դիարբեքիրի էմիրը:

Բ. Էջ 33

7

Հիշատակություն նրանց՝ որ տիրեցին պետության,
Սուլթան Արու-Սայիդի մահից հետո: Նրանցից 1) Շեյխ
Հասան, նրա (Սուլթանի) հորաքեսորդին, որ հիշեցինք, տի-
րեց ամբողջ Իրակ Արաբի վրա: Նրանցից 2) Իրանիմ Շահ,
Էմիր Սունիթայի որդին, տիրեց Մուսուլին և Դիարբեքիրի
վրա:

Բ. Էջ 123—4

8

Երկու ամսից ավել էր մնում մինչև կարավանի մեկ-
նելու ժամանակը. ուստի հարմար թվեցավ ինձ ճանապար-
հորդել մինչև Մուսուլ և Դիարբեքիրը, տեսնելու համար այս
երկիրը: [Ապա գնում է մինչև Մծրին և Մերդին, բայց չե-
մնցնում Տիգրանակերտ]:

Բ. Էջ 131

9

Տաններորդ օրը հասանք Ալոյտ քաղաքը, ոյս է Բուռ

الروم و هذا الاقليم المعروف ببلاد الروم من احسن
اقاليم الدنيا و قد جمع الله فيه ما تفرق من المحسن
في البلاد فأهلها اجمل الناس صوراً و انظفهم ملابس و
اطي THEM مطاعم و اكثـر خلق الله شفقة و لذلك يقال
البركة في الشام و الشفقة في الروم انما عنـى به اهل
هذه البلاد و كـنا متى نزلنا بهذه البلاد زاوية او داراً
يتقدـد احوالنا جـير اتنا من الرجال و النساء و هـن لا
يـتحجـن فـاذا سافـرـنا عنـهم و دعـونـا كانـهم اقارـبـنا و اهـلـنا
و تـرى النساء باـكيـات لـفـراقـنا مـتـاسـفات و من عـادـتهم
بتـلكـ البلاد ان يـخـبـزـوا الخـبـزـ فيـ يـوـمـ وـاحـدـ منـ الجـمـعـةـ
يـعـدوـنـ فيـهـ ماـيـقـوـتـهـمـ سـائـرـهـاـ فـكـانـ رـجـالـهـمـ يـاتـونـ إـلـيـناـ
باـلـخـبـزـ الـحـارـ فيـ يـوـمـ خـبـزـهـ وـ معـهـ الـاـدـامـ الطـيـبـ اـطـرافـاـ
لـنـاـ بـذـالـكـ وـ يـقـولـونـ لـنـاـ انـ النـسـاءـ بـعـشـنـ هـذـاـ الـيـكـمـ وـ
هـنـ يـطـلـبـنـ مـنـكـمـ الدـعـاءـ وـ جـمـيـعـ اـهـلـ هـذـهـ الـبـلـادـ عـلـىـ
مـذـهـبـ الـامـامـ اـبـيـ حـنـيفـهـ رـضـهـ مـقـيـمـينـ عـلـىـ السـنـةـ لـاـ

Երկրի սկիզբը: Այս երկիրը, որ հայտնի է Ռումի երկիր
տնօւնով, աշխարհի գեղեցկագույն երկիրներից մեկն է:
Աստված նրա մեջ է հավաքել այն բայր գեղեցկություն-
ները, որ ցրվել է ուրիշ երկիրներում: Նրա բնակիչները
մարդկանց ամենագեղեցիկներն են դեմքով, հագուստները
ամենամաքուր և ուտելիքները ամենաընտիր: Աստուծո
ամենագթառատ արարածներն են: Դրա համար ել ասում
են. «Օքհնությունը Սիրիայում, գթությունը Ռումում»:
Մրանով հասկանում են այս երկրի բնակիչները:

Երբ իջևանում էինք այս երկրում մի վանքի կամ մի
տան մեջ, մեր հարեանները՝ այր ու կին, հոգ էին տանում
մեր վիճակի մասին, կանայք քողարկված չէին: Երբ մեկ-
նում էինք նրանցից, հրաժեշտ էին տալիս մեզ՝ իբրև մեր
ազգականները և ընտանիները, տեսնում են կանայք լաց
էին լինում մեր բաժանման առթիվ և տիրում: Այդ երկրի
սովորություններից մեկն ել այն է, որ հացը եփում են
շաբաթը մի անգամ և այդ օրը պատրաստում են վորքան
որ պետք է տմբալջ շաբաթին համար: Հաց եփելու օրը
մարդիկ գալիս էին մեզ մոտ, բերելով տաք հաց և նրա հետ
ընտիր ուտելիքներ, որ նվիրում էին մեզ: Մեզ ասում էին,
թի կանայք են ուղարկել ձեզ սրանք և ձեզանից խնդրում
են ձեր աղոթքը: Այս երկրի ըոլոր բնակիչները իմամ Արու-

قدرى فيهم ولا رافضى ولا معتزلى ولا خارجى
 و لا مبتدع و تلك فضيله خصمهم الله تعالى بها الا انهم
 يا كلون الحشيش و لا يعيون ذلك و مدينة العلايا
 التي ذكرناها كبيرة على ساحل البحر يسكنها التركمان
 و ينزلها تجار مصر و اسكندرية و الشام و هى
 كثيرة الخشب و منها يحمل الى اسكندرية و دمياط
 و يحمل منها الى سائر بلاد مصر و لها قلعه باعلاها
 عجيبة منيعة بناها السلطان المعظم علاء الدين الرومى
 و لقيت بهذه المدينة قاضيها جلال الدين الارزنجانى
 و صعد معى الى القلعه يوم الجمعة فصلينا بها و
 اضافنى و اكرمنى و اضافنى ايضاً بها شمس الدين بن
 الر吉حانى الذى توفي ابوه علاء الدين بمالي من بلاد
 السودان

ذكر سلطان العلايا

و فى يوم السبت ركب معى القاضى جلال الدين و

Հանիֆայի գավանությամբ են (Աստված թող գոհ լինի նրանից) և հաստատ են սուննաթում. չկա նրանց մեջ ոչ կազարի, ոչ ռաֆիպի, ոչ մութազիլի, ոչ խարիջի և ոչ յուբթատի: Աստված բարձրյալն պարզեց է այս շնորհը նրանց: Միայն թէ նրանք ծխում են հաշիշ և չեն խորշում նրանից:

Ալայա քաղաքը, որ հիշեցինք, մեծ է, ծովի եղերքում. բնակիչները թուրքման են. այնտեղ են իջնում Կահիրեի, Ալեքսանդրիայի և Ասորիքի վաճառականները. հարուստ է փայտով, որ այնտեղից տանում են Ալեքսանդրիա և Դամիաթ, և այնտեղից ել տանում են Եղիպտոսի մյուս քաղաքները: Նրա մեջ կա մի բերդ, բաղադի ամենաբարձր ռեդում, հրաշալի և ամուր, որ կառուցել է մեծ Սուլթան Ալաեդդին Առուսի: Այցելեցի այս քաղաքում նրա դադի Զալալ-էդդին Երզնկացուն. ինձ հետ բարձրացավ բերդը, ուրբաթ օր, աղոթեցինք այնտեղ, պատվեց ինձ և մեծարեց, ինձ մեծարեց նաև Շամս-էդ-դին, որդի Առուաջիհանիի, որի հայրը՝ Ալաեդդին մեռավ Մալի բաղտաւմ, Սուլանի երկրում:

40441

A 32958



Հիւատակաւրյաւն Ալայայի Սուլթանի

Շաբաթ օրը, Ճի հեծավ ինձ հետ՝ զադի Զալալ-էդ-դինը և գնացինք այցելելու Ալայայի թագավորին, որ է Յու-

توجهنا الى لقاً ملك العلايا و هو يوسف بك و معنى
بك الملك ابن قرمان يفتح القاف و الراء و مسكنه
على عشره اميال من المدينة فوجدناه قاعداً على الساحل
وحده فوق راييه هنالك و الاماً و الوزراء اسفل منه
و الاجناد عن يمينه و يساره و هو نحضوب الشعر
بالسوداد فسلمت عليه و سالني عن مقدمي فأخبرته عما
سائل و انصرفت عنه و بعث الى احساناً و سافرت من
هنالك الى مدینه اسطاليه و ضبط اسمها بفتح الهمزة و
اسكان النون و فتح الطاء المهمل و الف و لام
مكسور و يا آخر الحروف و اما التي بالشام هي
انطا كيه على وزنها الا ان الكاف عوض عن اللام
و هي من احسن المدن متناهيه في اتساع الساحة و
الضخامة اجمل ما يرى من البلاد و اكثره عمارة و
احسن ترتيباً وكل فرقه من سكانها منفردة بانفسها
عن الفرقه الأخرى فتجار النصارى ما تكون منها بالموضع

սուլք բեկ (բեկ նշանակում է թագավոր), որդի Կարամանի
(կաֆը և ռան ունին ֆաթհա): Նրա բնակարանը քաղաքից
տասը մղոն նեռու էր: Մենք նրան գտանք նստած, ծովեղ-
րի վրա, մինակ, այստեղի մի բլուրի բարձունքում: Էմիր-
ները և վեզիրները նրանից ցածրումն էին. զինվորները
նրա աջից ու ձախից: Նա ուներ սև մազեր: Ողջունեցի
նրան և նա ինձ հարցրեց իմ գալուստի մասին. տեղեկու-
թյուն տվի իր հարցրածի մասին և հրաժեշտ առի նրանից:
Ինձ մի նվեր ուղարկեց:

Այստեղից ձամբա ընկա Անթալիա քաղաքը: (Նրա
անունը կարդացվում է համզան ֆաթհայով, նունը սուքու-
նով, կոլոր թան ֆաթհայով, և ալիֆ, և լամը քասրայով և
տառերի վերջին յա: Սակայն այն, որ Սիրիայումն է, այն
է Անթալիա, նույն ձեն ունի, միայն թե լամի տեղ ունի
կափ): Ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է. ընդարձակու-
թյամբ և մեծությամբ հավասարվում ե ամենաբազմաբու-
հ ամենագեղեցիկ կառուցված քաղաքներին: Բնակիչների
ամեն մի կարգը բոլորովին անշատված է մյուս կարգերից:

المعروف بالميناء و عليهم سور تسد ابوابه عليهم ليل
و عند صلاة الجمعة و الروم الذين كانوا اهلها قد يما
سا كانوا بموضع اخر منفردين به و عليهم ايضاً
سور و اليهود في موضع آخر و عليهم سور و الملك
و اهل دولته و مماليكته يسكنون ببلدة عليها ايضاً
سور يحيط بها و يفرق بينها وبين ما ذكرناه من
الفرق و سائر الناس من المسلمين يسكنون المدينة
المظمى و بها مسجد جامع و مدرسة و حمامات كثيرة
و اسوق ضخمة مرتبة بابد ع ترتيب و عليها سور
عظيم يحيط بها و بجميع المواقع التي ذكرناها و
فيها **البساتين الكثيرة** و **الفواكه الطيبة** و **المتشمس**
العجب المسمى عندهم بقمر الدين و في نواته لوز
حلو و هو ييس و يحمل الى ديار مصر و هو بها
مستطرف و فيها عيون الماء الطيب العذب الشديد
البرودة في ايام الصيف نزلنا من هذه المدينة بمدرستها
و شيخها شهاب الدين الحموي و من عادتهم ان يقرأ

Քրիստոնյա վաճառականները բնակվում են մինա (նավահանգիստ) կոչված վայրում, շրջապատվոծ պարսպով, որի դռները փակվում են գիշերը և ուրբաթի աղոթքի ժամանակ։ Հույները, որոնք բաղաբի հին բնակիչներն են, բնակվում են մի ուրիշ տեղում, անջատված և նույնպես պարսպով պատած։ Հրյաները ուրիշ տեղում և շրջապատված պարսպով։ Թագավորը, պետական անձինք և իր ստրուկները բնակվում են մի քաղաք, նույնպես շրջապատված պարսպով, որ բաժանում է նրանց մեր հիշած մյուս կարգերից։

Մնացյալ իսլամ հասարակությունը բնակվում է մեծ քաղաքում, ուր կա մի ավագ մզկիթ, մի մաղրասա, բազմաթիվ բաղանիսներ և մեծ շուկաներ, խիստ կարգավորված։ Քաղաքը ունի մի մեծ պարիսպ, որ շրջապատում է այն և բոլոր այն տեղերը՝ որ հիշեցինք։ Նրա մեջ կան շատ պարտեզներ, ընտիք պտուղներ և սքանչելի ծիրան, որ նրանց մոտ կոչվում է կամար-էղ-ղին (կրոնի լուսին). Կորիզը քաղցր միջուկ ունի. այս ծիրանը չորացնում են և տանում Եղիպառոս, ուր շատ հարգի է։ Նրանում կան նաև ընտիր ջրի ակունքներ, քաղցր և ամառվա օրերին շատ սառն։

Այդ քաղաքում մենք իջևանեցինք մագրասայի մեջ, շեյխն էր Շիհաբ-էղ-ղին Ալհամավի։ Իրենց սովորությունն

جماعة من الصبيان بالاصوات الحسان بعد العصر من
كل يوم في المسجد الجامع وفي المدرسة ايضاً سورة
الفتح و سورة الملك و سورة عم

10

ذكر سلطان اسطاله

و سلطانها خضر بك بن يونس بك وجدناه عند
وصلنا اليها عليا فدخلنا عليه بداره و هو في فراش
المرض فكلمنا بالطف كلام و احسنه و ودعناه و
بعث اليها باحسان و سافرنا الى بلده بردور

11

ثم سافرنا الى مدینه سیواس و ضبط اسمها بكسير
السين المهمل و با مد و آخره سین مهمل وهي من بلاد
ملك العراق و اعظم ماله بهذا الاقليم من البلاد و بها
منزل امرأته و عماله مدینه حسنہ العمارة واسعة

է, որ երախաների խումբը կարդում է քաղցր ձայնով, հետինքից հետո, ամեն օր, մզկիթում, ինչպես և մաղրասայում, դուրանի էլֆաթն և էլմուլք և ամմ կոչված սուրաները¹⁰):

Բ. Էջ 255—260.

10

Հիւտակուրյաւն Անքալիայի սուլթանի

Նրանց սուլթանն է Խիղը բեկ, որդի Յունիս բեկի: Երբ հասանք այնտեղ, մենք գտանք նրան հիվանդ. մտանք նրա մոտ՝ իր պալատը և նա հիվանդության անկողնումն էր: Նա խոսեց մեզ հետ շնորհալի և գեղեցիկ խոսքերով: Մենք հրաժեշտ աշխատ նրան և մեզ ուղարկեց իր նվերները: Ճանապարհ ընկանք գեպի Բուրդուր քաղաքը:

Բ. Էջ 265

11

Այնուհետև գնացինք Սիվաս քաղաքը¹¹) (այս անունը կարդալ սին ու քեսրեռվ և երկար ի-ով և վերջը սին): Աս իրակի թագավորի քաղաքներից է և այս երկրում նրան պատկանող քաղաքներից մեծագույնն է: Այստեղ են բնակվում իր էմիրները և հարկահավաքները: Քաղաքն ունի

23

الشوارع اسواقها غاصه بالناس و بها دار مثل المدرسه
تسمى دار السيادة لا ينزلها الا الشرفاء و نقبيهم ساكن
بها و تجري لهم فيها مدة مقامهم المفرش و المطعم و
المسمع و غيره فيزودون اذا انصرفوا

ولما قدمنا الى هذه المدينة خرج الى لقائنا اصحاب
الفتى اخي احمد بجوجي و بحق بالتر كيه السكين و
هذا منسوب اليه و الجيمان منه معقودان بينهما قاف
و باوه مكسوره و كانوا جماعه منهم الركبان و المشاه
ثم لقينا بعدهم اصحاب الفتى اخي جلبي و هو من
كبار الاخيه و طبقته اعلى من طبقه اخي بجوجي
فطلبوا ان ننزل عند هم فلم يمكن لى ذلك لسبق
الأولين و دخلنا المدينة معهم جميعاً و هم يتغاضون
و الذين سبقوا الينا قد فرحوا اشد الفرح بنزولنا
عند هم ثم كان من صنيعهم في الطعام و الحمام و
المبيت مثل ضيع من تقدم و اقمنا عندهم ثلاثة في
احسن ضيافة ثم اتنا الفاضي و جماعه من الطلبه و معهم

գեղեցիկ շենքեր, լայն փողոցներ, և նրա շուկաները լիքն են
մարդկանցով: Նրա մեջ կա մի տուն՝ նման դպրոցի և կոչ-
վում է դար-տօ-սիլադար (իշխանության տուն): Այստեղ են
իջնում միայն շերիֆները (Մուհամեմեդի ժառանգներ), այն-
տեղ է բնակվում նրանց զինավորը. և իրենց բնակության
միջոցին նրանց տրվում են անկողիններ, ուստեսա, մոմ և
այլ բաններ. և երբ մեկնին, տրվում է նրանց ճամբի պա-
շար¹²⁾:

Երբ հասանք այս քաղաքը, մեզ զիմավորելու դուրս
հկան եղբայր Ահմադ բիչաքչի անուն երետասարդի ընկեր-
ները (բիչաք թուրքերեն նշանակում է դանակ. իսկ սա նրա
ածանցն է. երկու ջեմի միջն կափ տառը կա և թ ունի քես-
րե), նրանք բաղմաթիվ էին՝ ձիավոր և հետիոտն: Ապա
ովատաճեցինք եղբայր Զելեբի երետասարդի ընկերներին.
Ինքը եղբայրության ավագներից է և իր կարգը ավելի
բարձր է քան եղբայր բիչաքչի կարգը: Նրանք հրավիրե-
ցին մեզ, որ իջեվանենք իրենց մոտ. իսկ սա անկարելի
եղավ ինձ համար, որովհետեւ նրանցից առաջ մյուսներն
էին հրավիրել: Մենք մտանք քաղաք՝ նրանց հետ խմբո-
վին. և նրանք պարծենում էին և նրանք որ առաջ էին
եկել մեզ մոտ, ուրախանում էին մեծ ուրախությամբ, որ
մենք իջնում էինք իրենց մոտ: Նրանք վարվեցին կերակրի,
բաղանիսի և իջևանի վերաբերմամբ այնպես՝ ինչպես նա-
խորդները: Նրանց մոտ մենք մնացինք երեք օր, ամենա-
լավ հյուրասիրության մեջ:

خيل الامير علاء الدين ارتنا نائب ملك العراق يبلاد
الروم فركبنا اليه و استقبلنا الامير الى دهليز داره
فسلم علينا و رحب و كان فصيح اللسان بالعربية و
سائلى عن العراقيين و اصبهان و شيراز و كرمان و عن
السلطان اتابك و بلاد الشام و مصر و سلاطين التركمان
و كان مراده ان اشكر الكرييم منهم و اذم البخيل
فلم افعل ذلك بل شكرت الجميع فسر بذلك مني و
شكرنى عليه ثم احضر الطعام فاكلنا و قال تكنون
في ضيافتي فقال له الفتى اخي جلبي انهم لم ينزلوا
بعد بزاويتى فليكونوا عندى و ضيافتك تصلهم فقال
افعل فانتقلنا الى زاويته و اقمنا بها ستاً في ضيافته و
في ضيافة الامير ثم بعث الامير بفرس و كسوة و
درارهم و كتب لنوابه بالبلاد ان يضيغونا و يكرهونا و
يزودونا و سافرنا الى مدينة اماصية (و ضبط اسمها
بفتح المهمزة و الميم و الف و صاد مهملا مكسور و
يا آخر الحروف مفتوحة) مدينة كبيرة حسنة ذات

Այսուհետև զաղին եկավ մեզ մոտ՝ մի խումբ աշաւ-
 կերտներով, իրենց հետ էլ իրակի թագավորի Ծումի երկ-
 րում փոխանորդ էմիր Ալայէդզին Արթնայի ձիերը: Հեծանք
 ձիերը: Էմիրը գիմավորեց մեզ իր պալատի նախասենյա-
 կում և ողջունեց և բարի գալուստ մաղթեց, արաբերեն լավ
 էր խոսում. նա հարցափորձեց ինձ երկու իրակների, Սպա-
 հանի, Շիրազի, Քիրմանի, Սուլթան Աթաբեկի, Սիրիայի,
 Եղիպտոսի և թուրքմեն սուլթանների մասին: Իր փափագն
 այն էր որ ես գովեի նրանցից վեհանձններին. և պարսավեհ
 ադաներին: Ես այդպես չարի: Այլ գովեցի բոլորին:
 Մրա համար նա ուրախացավ և գոհունակություն հայտնեց
 ինձ: Ապա ճաշ պատրաստեցին և կիրանք: Ասաց. «Դուք ինձ
 հյուր կլինիք»: Երիտասարդ եղբայր Զելեբին պատրախանեց.
 «Դեռ նրանք իմ վանքը չեն իջևանել. Թող մնան ինձ մոտ,
 իսկ ձեր ճաշը կտրվի իրենց»: Ասաց. «Թող լինի»: Մենք փո-
 խադրվեցինք վանքը և մնացինք վեց օր՝ իրը իր հյուրը և
 էմիրի հյուրը: Ապա էմիրը ուղարկեց ձի, զգեստ և զրամ.
 ու զրեց իր փոխանորդներին քաղաքներում, որ հյուրա-
 սիրեն մեզ, պատվին և պաշար տան:

Ու ճամբա ընկանք գեղի Ամասիա¹³⁾ քաղաքը (կար-
 դալ այս անունը համգան և միմը և էլիֆը ֆեթհայով, սաղը
 քեսրեյով և վերջին գիրը յա ֆեթհայով): Մեծ ու գեղեցիկ

انهار و بساتين و اشجار و فواكه كثيرة و على انها رها
النواعير تسمى جناتها و دورها و هي فسيحة الشوارع
و الاسواق و ملوكها لصاحب العراق و بقرب منها
بلدة سونسى (و ضبط اسمها بضم السين المهملا و واو
مد و نون مضموم و سين مهملا مفتوح) و هي لصاحب
العراق و بها سكنى اولاد ولی الله تعالى ابى العباس
احمد الرفاعى منهم الشيخ عزالدين و هو آلان شيخ
الرواق و صاحب سجادة الرفاعى و اخوه الشيخ على و
المشيخ ابراهيم و الشيخ يحيى اولاد الشيخ احمد كوجك
(و معناه الصغير) ابن تاج الدين الرفاعى و نزلنا بزاويةتهم
و رأينا لهم الفضل على من سواهم ثم سافرنا الى مدينة
كمش (و ضبط اسمها بضم الكاف و كسر الميم و
شين معجم) و هي من بلاد ملك العراق مدينة كبيرة
عامره بآيتها التجاز من العراق و الشام و بها معادن
الفضة و على مسيرة يومين منها جبال شامخة و عرة لم
اصل اليها و نزلنا منها بزاوية الاخي مجد الدين اقمنا

քաղաք է, ունի գետեր՝ պարտեզներ, ծառեր և շատ պլա-
տուզներ: Գետերի վրա կան անիմսներ՝ պարտեզները ջրելու
և խմելու համար: Ունի լայն փողոցներ և շուկաներ: Իր
իշխողն է իրակի թագավորը:

Նրա մոտ է Սունուսա քաղաքը. (այս անունը կար-
պալ սինն ու երկար վավը դամմայով, նունը դամմայով և
սինը ֆեթհայով): Սա նույնպես Իրակի թագավորինն է:
Այստեղ են բնակվում բարձրյալն Աստուծո բարեկամի որ-
դիները՝ Արուլ Արբաս Ահմադ Առոիֆայի, նրանցից նաև
Շեյխ հզզեդզինը, որ այժմ Առոփիվաքի (և caravansérail)
շեյխը և Առոփիվայի սաջջալայի (ալսրդի գործ) տերն է: և
նրա եղբայրները՝ Շեյխ Ալի, Շեյխ իրրահիմ և Շեյխ Յահ-
յա, որոնք որդիքն են Քուչուք Շեյխ Ահմադի (նշանակում
է փոքր), որ է որդի Թաջ-Էղ-Ղին Առոփիվայիի: Մենք իջանք
նրանց վանքը և տեսանք նրանց ավելի գերազանց բոլոր
ուրիշներից:

Ապա ճանապարհվեցինք Թումուշ քաղաքը¹⁴⁾ (կարդալ
այս անունը քափ դամմայով և միմն ու շինը քեսրեյով).
այս էլ իրակի թագավորի քաղաքներից է: Սա մեծ ու շեն
քաղաք է, ուր գալիս են վաճառականները Իրակից և Շա-
մից, և ուր կան արծաթի հանքեր: Նրանից երկու օրվա
ճամբա հեռու կան բարձր և սեպ լեռներ, ուր ես չգնացի:

Մենք իջեկանեցինք այնտեղ, Մաջդէդին եղբար

بها ثلاثة في ضيافة و فعل افعال من قبله و جاء اليها
نائب الامير ارتنا و بعث بضيافة و زاد و انصرفنا عن
تلك البلاد فوصلنا الى ارزنجان (و ضبط اسمها بفتح
الهمزة و اسكان الراء و فتح الزاي و سكون النون
و جيم و الف و نون) و هي من بلاد صاحب العراق
مدينه كبيرة عامره و اكثر سكانها الارمن و المسلمين
يتكلمون بها بالتركية و لها اسواق حسنة الترتيب و يصنعون
بها ثياب حسان تنسب اليها و فيها مملدن الخاس و يصنعون
منه الاواني و البالسين التي ذكرناها و هي شبه المنا و
عندنا و نزلنا منها بزاويه الفتى اخي نظام الدين و هي
من احسن الزوايا و هو ايضاً من خيار الفتیان و
كبارهم اضافنا احسن ضيافة و انصرفنا الى مدينه
ارزالروم و هي من بلاد ملك العراق كبيرة الساحة
خرب اكثراها بسبب فتنه و قعت بين طائفتين من
التركمان بها و يشقها ثلاثة انهار في اكثرا دورها

վանքը և մնացինք այնտեղ երեք օր, հյուրընկալության մեջ: Նա էլ վարվեց մեզ հետ նախորդների նման: Մեզ մոտ եկավ իմիր Արթենայի տեղակալը և ուղարկեց հյուրընկալության և ճամբի պաշարի կերակարներ:

Մենք մեկնեցանք այս քաղաքից և հասանք Արգանցան (կարգալ այս բառը համզան ֆաթհայով և ըեն սուքունով և զան ֆաթհայով և նունը սուքունով և ջիմ և ալիֆ և նուն), սա էլ իրակի թագավորի քաղաքներից է. մեծ ու շեն քաղաք է. նրա բնակիչներից մեծագույն մասը հայ է. մուսուլմանները խոսում են թուրքերեն. այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ. այստեղ շինում են գեղեցիկ կերպարներ, որ իր անունով են կոչվում: Նրա մեջ կան պղնձի, հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուս»-ներ¹⁵), որ հիշեցինք. զրանք նման են մեր աշտանակներին:

Այնտեղ մենք իջանք երիտասարդ եղբայր Նիզամ-էդդինի վանքը, որ գեղեցկագույն վանքերից է. ինքն էլ լավագույն և ազնվական երիտասարդներից է. նա մեզ ցույց տվեց ամենալավ հյուրասիրություն:

Այնտեղից կնացինք Արգում¹⁶) քաղաքը, որ իրակի թագավորի քաղաքներից է. շատ մեծ, բայց մեծ մասը ավերված, այն կռվի պատճառով, որ ծագեց այնտեղի երկու թուրքման ցեղերի միջև: Այնտեղից են անցնում երեք գետ:

بساتين فيها الاشجار و الدرالى و نزلنا منها بزاويه الفتى
 اخي طومان و هو كبير السن يقال انه أناف على مايه
 و ثلاثين سنه و رايته يتصرف على قدميه متوكلاً على
 عصاً ثابت الذهن مواظباً للصلاده في اوقاتها لم ينكر
 من نفسه شيئاً الا انه لا يستطيع الصوم خدمتنا بنفسه في
 الطعام و خدمتنا اولاده في الحمام و اردنا الانصراف عنه
 ثاني يوم زرولنا فشق عليه ذلك و ابى منه و قال ان
 فعلتم نقصتم حرمتى و انما اقل الضيافة ثلاث فاقمنا لديه
ثلاثة

11

و كان بهذه المدينة من الصالحين الحاج ناصر من
 اهل دياربكر و سكانه بقبه من قباب الجامع دخلنا
 اليه و اكلنا من طعامه و اتفق له لما دخل القاضى
 جلال مدینه كنبایه حين خلافه انه اتاه و ذكر للسلطان
 انه دعا له فهرب لئلا يقتل كما قتل الحيدرى

տներից շատերում պարտեզներ կան և նըանց մեջ ծառեր և (խաղողի) որթեր¹⁷):

Մենք իջանք երիտասարդ-եղբայր¹⁸) Թումանի վանքը. շատ տարիքավոր մարդ եր. ասում են թե 130 տարեկանից ավելի է: Տեսա նրան՝ գնում գալիս էր ոտքով, հենված դավաղանի վրա. հիշողությունը տեղը, կատարում էր աղոթքները իրենց ժամանակին և ոչ մի բանից չէր դանդատվում իր անձի մասին, բացի այն՝ որ չէր կարողանում ծոռ պահել: Ծառայեց մեղ անձամբ ճաշի ժամանակ, իսկ իր որդիները մեղ ծառայեցին բաղանիսում:

Մենք ուղեցինք հրաժեշտ տալ իրեն՝ մեր իջևանելու երկրորդ օրը. նա գժգոհ մնաց սրանից և մերժեց. և ասաց. «Եթե այդ անեք, իմ պատիվը կնվաստացնեք, որովհետեւ հյուրնկալության ամենակարճ ժամանակը երեք օր է»: Մենք էլ երեք օր մնացինք մոտը:


Բ. էջ 289—295

[Ինչպես հրատարակիչները, էջ 457 ծան. նկատում են, այստեղ պետք է բնագրից թերթ ընկած լինի. որովհետեւ ճանապարհորդը կարինից հանկարծ թռչում է Արշիպելագոս]:

11

Կար այս քաղաքում (Cambaeie, Հնդկաստան), բարեպաշտներից մեկը, հաջի Նասիր, Դիարբեքիրի լնակիչներից. նա լնակվում էր մզկիթի գմբեթներից մեկում: Մըտանք նրա մոտ և հետը ճաշ արինք: Եւ եղալ որ, երբ դատավոր Զալալը, իր ապատամբության միջոցին մտավ Քինքայա (Cambaeie) քաղաքը, Նասիրը եկավ նրա մոտ. հայտնեցին Սուլթանին թե նա աղոթել է նրա համար. և նա փախալ որ չինի թե սպանի նրան, ինչպես սպանել էր Հայդարին:

Բ. էջ 57



1

Lotus անունով կան զանաղան բույսեր։ Հնության մեջ հայտնի էր մի տեսակ lotus, որի պտուղը այնքան քաղցր էր, որ ուտողը մոռանում էր իր հայրենիքը։ Նշանավոր է նույնպես եգիպտական lotus-ը, որ կոչվում է նաև նեղասի օււոտն կամ նունաժար. սրա բոլոր մասերը ուտելի են. ցողունի ծուծը չոքացնելով և աղալով պատրաստում են այսուր, որից ստացվում է հաց. նրա հունդը Սիրիայի շուկաներում շատ հարգի է։

2

Երրայտական Ա. Գրքի մեջ ավանդված է թե Աղամի դրախտից 4 գետ էր բղիում (Փիսոն, Գեհոն, Տիգրիս և Եփրատ). Ահա իր բառերը՝ Եղարի հայ թարգմանությամբ. «Եւ տնկեաց Աստուած զդրախտն յԵղեմ ընդ արևելս... Եւ գետ երանէր յԵղեմայ ոռոգանել զդրախտն, և անտի բաժանի ի չորս առաջու Անուն միումն Փիսավա. Նա է որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ (=երր. Xavīlā), անդ ուր ոսկին է, և ոսկի երկրին այնորիկ աղնիւ. և անդ է սուտակն և ալին զահանակ. Եւ անուն գետոյն երկրորդի Գեհոնվա. Նա պատէ զամենայն երկիրն Եթովպացւոց (=երր. Քուշայ): Եւ գետն երրորդ՝ Տիգրիս. Նա է որ երթայ յանդիման (=երր. յարևելս) Ասորեստանի: Եւ գետն չորրորդ Եփրատէս» (Ծն. Բ. 8—14):

Եփրատ և Տիգրիս գետերը հանրածանոթ են: Շատ գիտուններ աշխատել են որոշել նաև Փիսոն և Գեհոն գետերի տեղը, որով և պիտի որոշվեր թե ուր է գտնվում երկրավոր երկակայական դրախտը: Շատեր այն կարծիքին են եղել թե դրախտը Հայաստանումն է եղել ըստ որում Փիսոն և Գեհոն համարվել են Արաքս և Ճորոխ գետերը:

Մահմետականների հագիսը ընդունել եռ դրախտի գետերն են Նեղոսը, Եփրատը, Սիհանը և Զիհանը: Առաջին երկու հայտնի են, իսկ Սիհունը և Զիհունը կիլիկիայի երկու մեծագույն գետերն են: Սիհունը (որ և Սիհան) հըների Սարոսն է. մի քանի ճյուղերով բխում է Տավրոսի լեռներից. ճյուղերից ամենից արևելյանը սկսվում է Հաձինի մոտերքից, իսկ ամենից արևմտյանը Կապաղովկիայից. բոլոր ճյուղերը միանում են Ատանայի հյուսիսային կողմում և այդ քաղաքի միջով անցնելով թեքվում են գեպի հարավարևմուտք և թափվում Միջերկրական ծովը:

Զիհունը (որ և Զիհան) հների Պիւռամիսն է. Սարոսից ավելի բազմաթիվ ճյուղերով բխում է կիլիկիայի արեւվելյան կողմերից. ճյուղերից մի քանիսը անցնում են Ալպիստանի, Զեյթունի, Մարաշի, Սիսի և Անաղարբայի մոտերքով և բոլորը միացած՝ Մսիսի առաջից թեքվում են գեպի հարավ, այստեղ մի պտույտ են գործում և Այասից քիչ ցած՝ թափվում են Ալեքսանդրեալ ծոցը:

Այս հաշվով հաղիսի դրախտը չափազանց ընդարձակ տարածություն ունի. նա սկսվում է Հայաստանից և կիլիկիայի վրայով գնում է մինչև Եղիպտոս: Բացի սրանից՝ ըստ հաղիսի՝ երկրավոր դրախտը նույն է երկուավոր դրախտի հետ:

3

Այս տեղեկությունից, ինչպես նաև § 5 տրված հիշատակությունից երկում է, որ ԺԴ դարում արաբ ընտկություն կար կարինում:

Իրն-ի Բատուտայի տեղեկությամբ արար բնակչություն կար դարձյալ Երզնկայում (տես § 9, էջ 17), Դիարքեքիրում (տես § 11, էջ 33), որոնցից մեկը մինչև Հընդհաստան էր դնացել:

4

Որովհետեւ արարերեն գրության մեջ ձայնավոր տառերը ընդհանրապես չեն նշանակվում, ուստի օտար և անծանոթ բառերի ընթերցումը անհնարին է լինում: Սրա առաջքն առնելու համար՝ արար հեղինակները, այդպիսի անսովոր բառեր և հատուկ անուններ գործածելու ժամանակ, նրանց կողքին տառ առ տառ որոշում են հնչյունները: Մեր հեղինակը այսպես է վարվել այստեղ Բուդրաս անվան հնչումը նշանակելու համար. նույնը հետո Ռուսուս, Սիվաս, բիչար, Ամասիա, Սունուսա, Ատալիա, Գումուշ և Սրդանջան բառերի համար:

Այս երկույթը գրեթե այն է՝ ինչ որ անգլիացոց մեջ spell է կոչվում:—Երբ անգլիացիք իրար հետ խոսելիս՝ բարբառի տարբերության պատճառով իրար չեն հասկանում, իսկույն ասում են spell (հեզիք): Եւ խոսողը տալիս է անծանոթ բառի տառերի անունը. սրանով հասկանում են իրար:

Ֆրանսսիացի թարգմանիչը՝ իր թարգմանության մեջ հապավել է իրն-ի Բատուտայի այս հեղումները: Հարազատության, միևնույն ժամանակ արարական այս հետաքրքիր սովորությունը ընթերցողներիս ծանոթացնելու համար, ես բոլոր այդ հեղումները պահեցի:

5

Մալիք-ալ-Նասիրը մեր պատմության մեջ հիշվում է Մելիք-Նազար անունով: Սա Եգիպտոսի սուլթանն է, որ թաթարների և թուրքմենների հետ միացած քանիցս ան-

գամ արշավեց Կիլիկիա՝ Ռուբինյան պետությունը կործանելու նպատակով: Իբն-ի Բատուտայի ժամանակ, Մելիք-Նաղար երեք անգամ արշավեց Կիլիկիա և մեծ ավերումներ գործելուց հետո՝ Լեռն Եթագավորին հարկատու դարձրեց (1335—37): Սրա համար է, որ Իբն-ի Բատուտա ասում է թե «Հայերը Մալիք-ալ-Նասիրին հպատակ են և նրան հարկ են տալիս»:

6

Բաղկայտ բառը (որով կոչվել են Կիլիկիայի հայ թագավորների արծաթյա զբամբերը) չկա Կամուսի հոյակապ բառարանում. ուստի արաբերեն չե. և արդյոք աղավաղված հայերեն բառ է:

7

Դաբիգիյա բառն էր, իր բոլոր տարբերակներով, չկա Կամուսի բառարանում. ուստի պետք է ենթադրել թէ արաբերեն չե, այլ աղավաղված հայերեն մի բառ:

8

Էլակուօ բառով պետք է հպականալ Ակ-կուօ, որ է թրք. ազ զաՏ «սպիտակ թռչուն»:

9

Էմիր Հուսամ-էղ-դինի այս դեպքը, երբ Եղիպատոսի սուլթանը անմիջապես ընդունեց հայերի գանգատը և հրամայեց խեղղել իր նշանավոր էմիրին, ցույց է տալիս լթե որքան հարդգած էին հայերը Եղիպատացոց աչքում:

Ալայա քաղաքը գտնվում է Կիլիկիայի արևմտյան ծովափին, Պամփիլիայի հարավային մասում, Ատալիայի ծոցում: Այս տեղը մի մեծ հրվանդան է, որ բաժանում է Պամփիլիան Քարային Կիլիկիայից: Բնության հոյակապ կառուցվածքը, միացած մարդկային ճարտարության հետ՝ ստեղծել է մի անմատչելի ամրություն: Հին ժամանակ կոչվում էր Կոռուկիսիսն, որ անշուշտ հուն, կօրական կորակոս «ազռավ» բառից է և նշանակում է իրը թե «ազռավաբերդ»: Իրոք որ միայն ծովային ազռավները կարող են թափել ծովի մեջ կարկառած այս ամենի քարաժամուերի գլխին:

Հայտնի չե թե Թրիստոսից քանի դար առաջ հիմնվեց այս բերդաքաղաքը: Գիտենք որ Սելեկյանց Անտիոքոս թագավորը պաշարեց այն, բայց չկարողացավ գրավել: Հոռվմայեցոց պետություն ժամանակ ծովահենների բունը գրաձավ: Պոմպեոս ն.ք. 65 թվին խորտակեց նրանց ուժը այս ժայռերի առաջ. 10,000 հոգի ընկան կովում, 20,000 հոգի գերի տարվեցան, 1200 նավ կործանվեց և 120 նավակայան նվաճվեց: Ցամաքի վրա 400 ամրոց կար, որոնց մեծ մասը գրավվեց, մնացածը բարբարոսների ձեռքը մնաց:

Միջին դարում կոռակիսիսնը կոչվում էր Candelor, Calandros, Scalandros, Castel Ubaldo կամ Baldo անուններով: Կիլիկյան թագավորության ժամանակ հայերը կոչում էին Կալբուռաս, որ հունարեն նշանակում է «գեղեցիկ լեռ»: Լեռն Բ նվաճեց այս տեղերը և ժառանգություն տվեց Սիր Ատանին, որով այդ շրջանը կոչվեց «Աշխարհ Սիր Ատանայ»: Իկոնիայի Սուլթանը Ալայեղղին, գրավեց այդ բերդը Սիր Ատանի թոռան ձեռքից և մի նոր քաղաք շինելով՝ իր անունով կոչեց Ալայեղղին: Այս բառից կը ճատամբ առաջացավ Ալայա անունը:

Ալայա քաղաքի նկարագրությունը, հրվանդանի հա-

տակագիծը, ինչպես նաև քաղաքի երեք չքնաղ տեսարան-ներ տես Ալիշանի Սիսուանում, էջ 311—316:

Վերը էջ 17, Իբն-ի Բատուտան հիշատակում է մահմետական կրօնի մի քանի դավանանքներ. սրանց բացատրությունը տալ մենք ավելորդ ենք համարում:

Անթալիա քաղաքը, որ հիշատակում է Իբն-ի Բատուտան, մեր մեջ ընդհանրապես կոչվում է Ատալիա: Գտնվում է Կիլիկիայի արևմտյան ծայրը, Ատալիո ծոցի խորքում: Պամփիւլիայի մայրաքաղաքն է: Այս քաղաքը շինել է Ն.թ. երկրորդ դարի կեսին, Պերգամայի թագավոր Ատալիո Բ Եղբայրասեր, որի անունով էլ կոչվել է: Ն.թ. 132 թ. Հռովմայեցիք գրավեցին և Պամփիւլիայի մայրաքաղաք դարձըրին: Այստեղ ապաստանեց Պոմպեոս՝ Փարսալայի պարտությունից հետո՝ 48 թ.:—Իկոնիայի Ղիճ-Ասլան սուլթանը գրավեց այս քաղաքը 1207 թ. հույների ձեռքից: Այս միշոցին Կիլիկիո Լևոն Բ թագավորը գրավեց այս ծովեղերքը՝ «մինչև յԱտալիա»: բայց հայտնի չէ թե ինքը կամ իր հաջորդները նաև Ատալիա քաղաքը գրավել են: Իկոնիայի սուլթանության տնկումից հետո՝ Ատալիան անցավ Կարամաններին, որոնց ձեռքն էր Իբն-ի Բատուտայի ժամանակ: Ժե դարի կեսին՝ Կարամաններից անցավ Օսմանցոց, որոնց ձեռքն է մինչև այժմ:—Ատալիայի մասին ավելի ընդարձակ տեղեկություններ, ինչպես նաև քաղաքի նկարը տես Ալիշանի Սիսուանում, էջ 302—5:

Արաբերեն հրատարակության 260—265 էջերում հեղինակը խոսում է Ալ-ախիյար ալ-ֆիրխան «Երիտասարդաների եղբայրություն» միության մասին,—Այս միությունը տարածված է ամբողջ Փոքր-Ասիայում, ամեն քաղաք, ամեն գյուղ, ուր որ թուրքման կա: Միության անդամները կոչվում են ալ-ախի (եղբայր) կամ Քարա (երիտասարդ). ապրում են համայնական կյանքով, իրար հետ միասին, ամուրի են: Նրանք ընտրում են մի գլխավոր՝ իրենց արհեստակիցներից: նա շինում է մի վանք, զարդարում գորգերով ու կարասիքով. անդամները աշխատում են ամբողջ օրը և

իրենց ամբողջ շահածը ըերում հանձնում են իրենց զլիսավորին. Գլխավորը այդ գումարով գնում է իրենց ըոլոր պետքերը, միասին ուտում և ազրում են: Արդարության պաշտպան, անիրավության հակառակորդ և չափազանց հյուրասեր են: Եթե պատահի մի հյուր, մի պանդուխտ կամ մի ճանապարհորդ, պահում են իրենց մոտ և նրա ըռլոր պետքերը հոգում: Իրենց հասարակաց ճաշից հետո՝ երգում ու պարում են: Ունին առանձին տարագ և կրում են մի տեսակ բարձր զլիսարկ: Սյապիսի միություններից մեկը, օրինակ, կոշկակարների միությունն էր, որ ուներ 200 անդամ:

Իրն-ի Բատուտայի այս հատվածը մենք չթարգմանեցինք և բավականանում ենք միայն այս տեղեկությամբ:

11

Սերաստիան հին ժամանակ կապադովկիայի թագավորության մասն էր և կոչվում էր Կապարա. Պոմպեոսը նըվաճեց այս քաղաքը և շատ ծաղկեցրեց. կոչվեց նոր անունով Թեսուտալովս: Պոնտոսի Պոլեմոն թագավորի կինը՝ Պիւթոգորիս տիրանալով այս քաղաքին՝ ի պատիվ Հռովմայեցոց Օգոստոս Սերաստոս կայսեր՝ վերակոչեց Սերաստիա: Թեոդոս Ա. կայսեր ժամանակ այս շրջանը կազմեց Առաջին Հայք նահանգը, որի մայրաքաղաքն էր Սերաստիա քաղաքը: Յուստինիանոս 536 թվին նույն շրջանը կոչեց երկրորդ Հայք, որի կուսակալանիստ մայրաքաղաքն էր Սերաստիա: Խոսրով Նուշիրվան 575 թվին առավ Սերաստիան ու այրեց: Արաբների ժամանակ, այս շրջանը՝ իրեն ավելի հեռու ընկած մի վայր, խաղաղ մնաց, որով և շատ փախստական հայերի գաղթավայրը դարձավ: Ժարում Սերաստիայի շրջանը գրեթե կես առ կես հայ բնակչություն ուներ: 1021 թ. Տուղթի բեկի արշանքներից վախեցած՝ վասպուրականի Սենեքերիմ թագավորը իր գերդաստանով ու ժողովրդով դադթեց այս երկիրը և հունաց կայ-

սեր հովանավորության տակ վասալ իշխանություն հաստատեց:

1060 թվին Տուղթիւ արշավեց Սերաստիայի վրա հույները և հայերը չկարողացան դիմանալ նրա զորության, քաղաքը գրավվեց, այրվեց և ավերակ դարձավ:

1100 թվին մի հայ իշխան Պարսկաստան գնաց և մահմետականություն ընդունելով՝ Սերաստիայի և շրջակայքի վրա սուլթան նշանակվեց՝ Թանիշման տիտղոսով: Այդ օրվանից է սկսվում Թանիշմանների փառավոր հարթատությունը: 1202 թվին Սերաստիան մտավ Կեսարիայի Սուլթան Ռուքնադդինի իշխանության տակ: 1243 թ. թաթարների Բաչու զորավարը գրավվեց Սերաստիան, բայց քաղաքին վնաս չհասցրեց: Այս ժամանակ հայերը մեծ բազմությամբ տարածված էին Սերաստիա, Ամասիա, Ծամբավ, Եւղոկիա, Զիկ և Մարսվան:

ԺԴ դարում (Իրն-ի Բատուտայի ժամանակն է), Կեսարիա, Եւղոկիա, Սերաստիա, Ամասիա, Սինոպ փոքրիկ անկախ իշխանություններ էին՝ Իկոնիայի սուլթան Ալայեղինի ընդհանուր գերիշանության տակ: Հայերը ծառայում էին նրա բանակում: Կեսարիայի թաղավորն էր այդ միջոցին էրիխոն:

Սրանք են Իրն-ի Բատուտայի այստեղ հիշած անձերը:

12

Սենեքերիմ թագավորը Սերաստիայում շինել էր մեղեղեցիկ ապարանք, մարմար քարերով ու քերովեած քանդակներով զարդարված, նուրբ և սքանչելի փորագրություններով, ընդհանական գերիշանության տակ: Հայերը ծառայում էին նրա բանակում: Կեսարիայի թաղավորն էր այդ կական ուսումնարան է և կոչվում է Gök medrese.

Հավանաբար Իրն-ի Բատուտայի հիշած Դարաստիւյադաթը այս շենքն է:

Ամասիա քաղաքը գտնվում է Սեբաստիայի և Սամսոնի միջև. պատկանում է Պոնտոսին: Այստեղ է ծնվել Սարարոն պատմիչը Ն.ք. 63 թվին: Նախ գտնվում էր Միհրդատի իշխանության տակ. Պոմպեոսը գրավեց և քաղաքը Հռովմայեցոց և ապա Հռովնաց իշխանության տակ մտավ: 1064 թվին, Կարսի Գաղփիկ թագավորը իր իշխանությունը փոխանակելով Փոքր-Հայքի մի մասի հետ, Ծամնդաւի հետ ստացավ նաև Ամասիան և ուրիշ քաղաքներ: Հայերը այդ ժամանակ այնպես շատացան, որ կազմեցին առանձին եպիսկոպոսական աթոռ և 1307 թվին Սուռմ գումարված ժողովին ներկա է նաև Գիորդ եպիսկոպոս Ամասիո:

ԺԴ գարում, Իբն-ի Բատուտայի ճանապարհորդության ժամանակ, ինչպես քիչ առաջ էլ ասացինք, Սեբաստիայի, Սինոպի և Եւրոպիայի նման, Ամասիան էլ կազմում էր փոքրիկ անկախ իշխանություն՝ Իկոնիայի սուլթան՝ Ալայերդինի ընդհանուր գերիշխանության տակ:

Իբն-ի Բատուտայի հիշած Գումուշն է արդի Գումուշնանա (Gumushane) քաղաքը, որ գտնվում է Տրապիզոնից հարավ-արևելքի լեռների մեջ: Համաշխարհային պատերազմից առաջ 1000 տուն բնակիչ՝ տաճիկ, հույն և հայ: Քաղաքի շուրջը կան անվերջ ու ընդարձակ պարտեզներ, որոնց մեջ անվանի է մանավանդ ինձորն ու տանձը, որ տեղացոց շատերի միակ ապրուստն է: Այստեղ կան նաև արծաթի հանքեր, բայց չեն շահագործվում: Շրջակա բնակիչները առհասարակ կոչվում են խալդ և հին Խալդերի շառունակությունն են համարվում:

Երկու օրվա ճամբար հեռու գտնված այն բարձր ու սեպ սարերը, ուր չի գնացել Իբն-ի Բատուտան, այժմ Կոլ-Դաշ կոչված լեռներն են:

Բայսօւս բառով պետք է հասկանալ Փիսօւս (արարեւըն) ի չկա. և փոխանակվում է թ կամ թ ձայնով): Իսկ Փիսօւս պարսկերեն բառ է, որ նշանակում է «աշտանակ»: Ծագում է պրա. վիճ «Ճարպ» և սուզ «այրել» բառերից: Գործածական է նաև Մշո բարբառում և Սալմաստում (վերջինս փառա ձեռվ):

Արարեւեն բնագրի 263-րդ էջում, իրն-ի Բատուտան նկարագրում է փիսօւսը: Դա մի պղնձյա աշտանակ է, երեք ոտքով. ծայրին կա պղնձե ճրազ, մեջտեղը պատրույցի խողովակը. ճրազը լցված է հալած ճարպով. կողքին էլ կան պատրույցը շտկելու մկրատներ. եղբայրներից մեկը, որ կոչվում է չիրադչի (ճրազ վասող) զբաղված է հատկապես պատրույցը սարքելու գործով:

Մինչև այսօր էլ նշանավոր է Երզնկան իր պղնձի հանքերով, պղնձագործությամբ և հատկապես մեծ, մարդահասակ ու գեղեցիկ պղնձյա աշտանակներով:

Արարեւեն բնագրում (էջ 294) այս բառը դրված էր յ տառով՝ փոխանակութ, պահեցինք անփոփոխ:

Կարինում (Արգրում) խաղող չի աճում՝ տեղի բարձրության պատճառով: Կան շատ բանջարանոցներ, բայց պարտեղ չկա: Բարձրահասակ անպառուղ ծառեր գտնվում են միայն Հայոց գերեզմանատնում: Զարմանալի է որ իրն-ի Բատուտան ծառեր և մանավանդ խաղողի որթեր է տեսել կարինում:

Այսուեղ Շերիտասարդ» բառը այն մաքով է, որ բացաբեցինք էջ 40:

ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

(հջ 5—33)

(Հայոց պատմության վերաբերյալ անունները շեղատառ են)

- Արու Արդառոահիմ Արդառոահման՝ որդի Մուստաֆայի,
աշակերտ Թաջէղդին էրրիֆայի, շեյխ Երուսաղիմի 7.
Արու Հանիփա իմամ 15—17.
Արու Սահիդ՝ սուլթան Իրակի 13.
Արուլ Արքաս Ահմադ Առոփայի Մունուսացի 29.
Աթաբեկ սուլթան 27.
Ալա-էդ-դին, որդի Սարիմ-էդ-դինի, Բուղրաս բերդի է-
միրի 9.
Ալաէդդին սուլթան Ռումի 17.
Ալաէդդին Արթենա էմիր Ռումի 27, 31.
Ալայս բդ. Ռումի 13, 17.
Ալեքսանդրիա քդ. Եգիպտոսի 17.
Ալժիր 5.
Ալի Ճարդարի 11
Ալի շեյխ Մունուսացի 29.
Ահմադ բիչաքչի, եղբայր, Միվասցի 25.
Ամասիա քդ. Փոքր-Ասիայի 27.
Անրալիս (Աստիլիս) քդ. Կիլիկիայի 19, 23.
Անթաքիա (Անտիոք) քդ. Միրիայի 19.
Առուջինանի, որդի Ալաէդդինի, Ալայսացի 17.
Առուիվաք (le caravanséral) 29.
Առոփայի սաջլաղա 29.
Ասիական ընկերություն 5.
Ասորիք (ահս և Միրիա) 5, 17.
Արաբական ծոց 5.
Արաբերին 27.
Արաբիա քարային 5;
Արզանջան (ահս և Երդնկա) 31.

Արգրում 7, 11, 31 (տես և Կարին).

Արշակելազոս 33.

Ավրիկն 5.

Աֆղանիստան 5.

Բուխարա 5

Բաւդրաս բերդ՝ սահման հայոց կելքնիայե 9.

Բուրդուր քղ. Փոքր-Ասիայի, մոտ Այդինի 23.

Դաբրիել հրեշտակապետ 7.

Դումուշ քղ. Պոնտոսի (այժմ Դումուշսանա) 29.

Դրանադայի թագավորությունը (Սպանիա) 5.

Դամիաթ քղ. Եգիպտոսի 17.

Դարասս-սիյազաթ Սիվասի 25.

Դեմերե 5.

Դիարբեջ 13, 33.

Դրախտ 7.

Եգիպտոս 5, 17, 21, 27.

Եվրոպա 5.

Երգնկար (ցի) 17.

Երուսաղեմ 7.

Եփրատ գետ 7.

Զանգիբար 5.

Էլակուշ սուրհանդակ 11.

Թաջէդդին Էրքիֆայի ուսուցիչ 7.

Թուման եղբայր Կարնեցի 33.

Թունիս 5.

Թուրքերն 31.

Թուրքման 17, 27, 31.

Իբն-ի Բատուտա (կյանքն ու գործերը) 5.

Իբն-ի Զուզի, քարտուղար Իբն-ի Բատուտայի 5.

Իբրահիմ Շահ, որդի Էմիր Սունիթայի, տեր Մուսուլի և
Դիարբեջիրի 13.

Իբրահիմ շեյխ Սունուսայի, որդի Քուչուք շեյխ Ահմադի 29:

Իղղեղդին շեյխ Առողիվաքի 29.

Իսլամ 21.

Իրակ 5, 13, 23, 25, 27, 29, 31.
Իրակ արաբի 13.
Իրան 11.
Խիզը բեկ, որդի Յունիս բեկի, սուլթան Ատալիայի 23.
Խորասան 11.
Խփչաղի Երկիր (հարավային Ռուսաստան) 5.
Կարաման հայր Յուսուֆ բեկի՝ թագավորի Ալայայի 19.
Կահիրե քղ. Եգիպտոսի 11, 17.
Կարին քլ. 33.
Հալեք քղ. 9, 11.
Հայաստան 9.
Հայդար Հնդկաստանցի 33.
Հայեր 9, 11, 31.
Հասան շեյխ, սուլթան Իրակ Արաբի 13.
Հնդկական Արշակելազոս 5.
Հնդկաստան 5, 33.
Հոռիներ 11.
Հուսամ-էդ-դին, Էմիր Ռուսուսի 9, 11.
Հրյաներ 21.
Մալդիվյան կղզիներ 5.
Մալի քղ. Սուդանի 17.
Մալիք-ալ-Նասիր, սուլթան Եգիպտոսի 9, 11.
Մաշադ-Ալի քղ. Նաջաֆի 11.
Մաջէղդին եղբայր, Գումուշխանացի 29.
Մարոկ 5.
Մերդին քղ. 13.
Մեքքա և քաղաք 5.
Միջագետք 5.
Մծբին քլ. 13.
Մուհամմեդ մարգարե 7, 25.
Մուսլիմաններ 11, 31.
Մուսուլ քղ. Իրակի 13.
Մուստաֆա հայր Աբու Աբդառահիմ Աբդառահմանի՝ շեյխ
Երուսաղեմի, Արգումցի 7.

Յահյա շեյխ Սունուսայի 29.
Յունիս բեկ, հայր Խիջը բեկի, սուլթան Ատալիայի 23.
Յուսուֆ բեկ, որդի Կարամանի: սուլթան Ալայայի 17.
Նաջաֆ 11
Նասիր հաջի Դիարբեքիլցի 33.
Նեղոս գետ Եգիպտոսի 7.
Նիզամ-էղ-ղին եղբայր Երզնկացի 31.
Շամ քղ. (Դամակոս) 29.
Շամս-էղ-ղին որդի Առուածիհանիի, Ալայացի 17.
Շիբանի, հայր Սարիմ-էղ-ղինի՝ Էմիր Բուղրաս բերդի 9.
Շիհաբ-էղ-ղին Ալհամավի, շեյխ Ատալիայի 21.
Շիբադ քղ. Իրանի 27.
Զելեբի եղբայր, Սիվասցի 25, 27.
Զինաստան 5,
Պարիս 5.
Պարսկաստան 5, 11.
Պոլիս 5.
Քալալ դատավոր Հնդկաստանում 33.
Քալալ դղին Երզնկացի, դադի Ալայայի 17.
Քիհան կամ Զիհուն գետ Կիլիկիայի 7.
Ռաջար ամիս 11.
Ռումի երկիր 11, 13, 15, 25.
Ռուսաստան 5.
Ռուսուս, վայր Կիլիկիա մտնելու նախապարհին 9.
Sanguineti 5.
Սարիմ-էղ-ղին, որդի Շիբանիի, Էմիր Բուղրաս բերդի 9.
Սիհան կամ Սիհուն, գետ Կիլիկիայի 7.
Սիս, Սոփ երկիրը (Կիլիկիա) 9.
Սիվաս քղ. (Սեբաստիա) 23.
Սիրիա (անսև և Ասորիք) 15, 19, 27.
Սուղան 5, 17.
Սունիթա Էմիր, հայր Իբրահիմ շահի՝ Մուսուլի և Դիար-
բեքիրի տիրոջ 13.
Սունուսա քղ. Փոքր-Ասիայի 29.

Սուվայթա, էմիր Դիարբեքիրի 13.
Սպահան քղ. 11, 27.
Tanger քղ. (Ափրիկե) 5.
Տիգրանակերտ (տես և Դիարբեքիր) 13.
Տիգրիս զետ 7.
Տրիպոլի քղ. Ափրիկե 5.
Ջեյլոն կղղի (Հնդկաստան) 5.
Փոքր-Ասիա 5.
Թինըայա քղ. Հնդկաստանի 33.
Քիրման (Պարսկաստան) 27.
Քոչուք շեյխ Ահմադ, որդի Թաջ-էղ-դինի, Սունուսացի 29.



Պետհամելսարանի Հրատարակչության
տպարան, Երևան, Աբովյան 104
Պատ. № 784, ավագ 1000,
Վիճ 1013

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Պրադ.



220032958

(254)

ԳԻՒԾ 4 ԱՐԵՔԼԻ

A 32958